

Ձ. Նոցա, որոնց նեստոր արդարացրի է, դատապարտելի  
 Է՝ Որոնք չեն ընդունիլ ժողովի կանոնները եթէ հոգևորական են՝  
 ցրկուեն աստիճանից, եթէ աշխարհական են՝ անհաղորդ մնան.  
 ( Կըլարու-նախ-ի ) . Թ. Վ. Մ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆՆԵՐԸ.

### Փ Ա Ր Է Ջ.

( Շ-ր-ն-ի-ն-ի-ն րէ- Ա-ր-ր-ի-ն Թ- Թ . )

Միայն ծանօթանալով Փարիզի բնակիչների վերև յառաջ բերած  
 թուերի չափազանց աճելութեան հետ, մենք կարող ենք հասկանալ  
 թէ այս աճելութիւնը պէտք է ստիպէր Փարիզի քաղաքական վարչու-  
 թեանը նորանոր միջոցներ որոնել ահագին քաղաքի մէջ բարեկարգու-  
 թիւն և կեանքը ապահովելու համար: Եւ ստուգիւ բնակիչների աճե-  
 լութեամբ մենք տեսնումենք Փարիզումը նոյնպէս աճելութիւնը քա-  
 ղաքական բիւզժետի մինչև չափազանց մեծ քանակութեան:

Այժմեան Փարէզ քաղաքի բիւզժետը արդէն աւելի է Եւրոպայի շատ  
 թագաւորութեանց բիւզժետներից և ներկայացնումէ տնտեսական և  
 սոցիալական ( հասարակական ) մտքով, շատ կրթական արժանի ոչ մի-  
 այն ուշադրութեան, այլ և ընդարձակ ուսումնասիրութեան երեւոյթ:

Որովհետև մենք ի նկատի ունելով մեր յօգուածի սահմանափակ  
 շրջանակը, կարող ենք ծանօթացնել մեր ընթերցողներին Փարիզի բիւզ-  
 ժետի հետ միայն շատ հարևանցի, ուստի մենք նախապատիւ ենք հա-  
 մարում այս դէպքում ընթանալ նոյն իսկ ճանապարհով, որով ըն-  
 թացել ենք վերևումը, խօսելով Փարիզի բնակիչների վերայ, Սկզբում  
 մենք կըտանք մեր ընթերցողներին ընդհանուր հասկացողութիւն քա-

---

մեռնէր. Բ. թէ Ադամի մեղքը միայն իրան վնասեց եւ ոչ մարդկութեան. Գ. թէ  
 Մովսէսի օրէնքը քրիստոսի աւետարանին հաւասար՝ մարդկանց առաջնորդումէ դէպի  
 յաւիտենից փրկութիւն. Գ. թէ քրիստոսից առաջ մարդիկ մեղքի տակ չէին. Ե. թէ  
 հորածին մանուկները սցն վիճակումն են՝ որի մէջ էր Ադամ՝ նախ քան պատուի-  
 րանազանցութիւնը. Զ. թէ Մարդիկ չեն մեռնում Ադամի յանցանոցն ի պատուհաս.  
 Ինչպէս եւ քրիստոսի յարութեան համար էլ յարութիւն չեն տուել. Է. թէ Մարդ  
 ծնվումէ առանց մեղքի եւ եթէ կամենայ՝ հեշտութեամբ կարող է հնազանդել  
 Աստուածային պատուիրանքին. ( Կեղ. Պատմ. փափ. եր. 221 — 223 ) .



զաքի բիւզժետի պատմական զարգացման մասին, իսկ յետոյ արդէն թոյլ կըտանք մեզ, այդ բիւզժետի վերաբերութեամբ մտնել ինչ ինչ առաւել օգտաւէտ խորհրդածութեան մէջ:

Ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել այն բանի վերայ առաջ քան 1797 թիւը Փարէզ քաղաքի բոլոր եկամուտը 500,000 ֆրանկից չէր անցնում և բաղկանում էին առաւելագէս այն աւելցրած սանտիմներէց \*) որոնք ֆրանսիական օրէնքներով աւելացնում են իւրաքանչիւր դեպարտամենտում (նահանգում) ընդհանուր պետական հարկերի վերայ և դեպարտամենտի տեղական պէտքերի և նորա վարչութեանը ծառայելու համար, Փարէզ քաղաքի համար 1797 թ. վերահաստատուեցին մաքսային հարկեր գործածութեան համար կարևոր առարկաներ ներս բերելիս, Այս մաքսային հարկերը միանգամից նշանաւոր կերպով բարձրացրին քաղաքի եկամուտները և այն ժամանակից մինչև ներկայ ժամանակը կազմում են Փարիզի հասոյթների երևելի յենարանը: Մաքսային հարկերի վերահաստատելուց յետոյ քաղաքային հողից շահուելու և առևտրական նպատակների կամ ժամանակաւոր կամ մշտական շինութիւն կառուցանելու ձեռք բերած հողի համար սահմանուեցին զանազան հարկեր: Յետոյ աւելորդ հարկեր դրուեցին չափերի և կշիռների ստուգութեան, գերեզմանատներում տեղեր վաճառելու և թաղման ծախսերի համար: Այս զանազան հարկերի շնորհիւ և այն զարգացման, որին հասան մէկ քանիսը երևելի կիրառութեան ձեւերից, քաղաքի մշտական եկամուտները, 1810 թ. աճեցին արդէն կէս միլիոնից մինչև համարեա թէ 23,000,000 ֆրանկ: Այս միջոցները շատ աւելացան զանազան ժամանակաւորապէս կամ արտաքոյ կարգի արդիւնքներով, աճրդական վաճառումներից (аукционна́я продажа), անյիշատակ մեռնողների կալուածներից և ըն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եկամուտների հետ միասին սկսան հետզհետէ աճել և ծախսերը, Համեստ 1,970,000 ֆ. թուերից որին հաւասարում էին Փարիզի ծախսերը 1797 թուականում, այդ ծախսերը հետ գհետէ հասան 1810 թ. նշանաւոր թուերին՝ 22,000,000 ֆրանկի և արդէն 1807 թուից այդ մշտական ծախսերի վերայ սկսան աւելանալ չափազանց ծախսեր քաղաքի պարտքերի տոկոսների և դրամագլուխների վճարելու մասին, որոնք 1810 թ. հասել էին արդէն 18,000,000 ֆրանկի, մեծ մասամբ գործադրուած քաղաքի վարչութիւնից կարևոր շինուածքներ շինելու համար:

Իրանակից զօրքերի մնալը Փարիզի մէջ 1813 թուին, որ պատճառ դարձաւ գորանով կենսական տխրոյքների սարսափելի թանգութեան 1816 և 1817 թուականներում, — ստիպեցին քաղաքին շատ նշանաւոր

(\*) Սանտիմ՝ ֆր. Հարիւրերորդ մասը ֆրանկի կոչվումէ սանտիմ, որ հաւասարումէ Ռուսաց 1/4 կոպէկին:



զսհարերու թիւններ անելու, որոնք կարող կըլինէին ծածկվելու միայն նոր փոխառութիւնների օգնականութեամբ, որոնք հասան 107,000,000 ֆրանկի:

Ի նստավրիացիայի ժամանակից, քաղաքի մշտական և արտաքոյ կարգի արդիւնքը, չը դադարեցին աւելի կամ պակաս արագապէս աճելուց, բայց նոցա հետ միասին աճեցին և ծախսերը, և նոցա մէջ հաւասարակչութիւնը երբեմն տարուբերվումէր այնքան, որ շատ անգամ պէտք էր լինում հնարել կամ արդիւնքների նոր աղբիւրներ, կամ նոր տեսակ փոխառութիւններ — բիւզժետի մէջ խանգարուած հաւասարակչութիւնը բարւոքելու համար:

Փարէզ քաղաքի արդեանց և ծախուց ընդարձակ ցուցակը, որ յառաջ է բերում երեւելի Ֆինանսիստ Մօրիս Բլօկը իւր ֆրանսիական վիճակագրութեան մէջ 1797-ից ց 1874 շրջան ժամանակի համար մեզ հետեւեալ եզրակացութեանց է հասցնում. Արդեանց աճելութիւնը առանձնապէս յայտնի է լինում 1820 թ. և 1830 թուականում հաւասարումէ 32,000,000 ֆրանկի. 1850 թ.—39,000,000 ֆրանկի, իսկ 1859 թ. 79,000,000 ֆրանկի. Յետոյ 1860 թ. այս թուանշանը յանկարծ աճումէ մինչև 104,000 000ի, իսկ 9 տարուանից ղկնի հասնումէ արդէն 156,000,000ի. Արդեանց այսպիսի անհամեմատ արագ աճելութեան պատճառը մասամբ Փարիզի ընդարձակելը և նորա բնակիչների նշանաւոր քանակութեամբ բազմանալն էր, մասամբ մայրաքաղաքի բնակիչների մեծ մասի բարեկեցութեան իրական զարգացումը, մասամբ դէպի Փարէզ գաղթող ահագին քանակութեամբ օտարականները Փարիզեան ամենայն ճիւղերի արուեստների ծաղկելը:

Սակայն արդեանց աճելութիւնը մասամբ էր նոր հարկեր վճարելու կարգադրութիւնը, որոնք ոչ ոքի համար ծանր չէին. Այսպէս՝ օրինակ, 1836 թուին գաղի խորանարդ մետրի վերայ, որ գործ է ածվում Փարիզի մէջ, 2 սանտիմ մաքս դրուեց և այս՝ ըստ երեւութին չնչին հարկը 1874 թուին արդէն հասցրեց քաղաքին 2,640,000 ֆր. իւրաքանչիւր տարի արդեանց վերայ աւելուած: Շների վերայ 1855 թուին հարկ դրուեց առանձին, սկզբումը գլխաւորապէս պօլիցիական միջոցով. Առաջին անգամ այս միջոցը բաւական կարճացրեց շների թիւը Փարիզի մէջ (փոխանակ 45,000ի, հետեւեալ տարին երեւեցան ընդամենը 33,000), բայց այնու ամենայնիւ շների վերայ դրած հարկը բերեց քաղաքին 300,000 ֆրանկ: Այս թիւը 1869 թ. հասաւ 460,000, իսկ 1874 թ.—520,000, որովհետև շների քանակութիւնը Փարիզումը դարձեալ աւելցաւ մինչև 50,000: Նոյն իսկ 1856 թուականում կարգադրուեց առանձին վարձ վաճառականների ժողով (ծրքա) մտնելու իրաւունքի համար, ուր այցելումն օրական 3000 կամ 4500 մարդիկ. Այդ վճարը (տակս) հենց առաջին տարում հասցրեց քաղաքին 1,000,000 ֆր. իսկ 1859 թ. 1,060,000 ֆր.:



Մեր ընթերցողներին Փարէզ քաղաքի արդեանց և ծախուց ահագին քանակութեանց մասին հասկացողութիւն տալու համար (բաց թողնելով մանրամասնութիւնները) մենք բերում ենք հետեւեալ ընդհանուր թուերը արդեանց և ծախուց երեք ամենականնաւոր տարիների համար 1860, 1869 և 1874:

	1860 թ.	1869 թ.	1874 թ.
Արդիւնք	158,289,363.	334,972,024	226,650,721
Ծախք	134,297,619	329,177,567	226,650,721.

Եթէ մենք արդեանց թիւը բաժանենք այժմեան դարու զանազան տարիների վերայ, Փարիզի բնակիչների ընդհանուր թուի զանազան արժանայիշատակ անցքերի հետ համեմատութեամբ, այն ժամանակ մենք կըտեսնենք, որ Փարիզի իւրաքանչիւր բնակիչի բաժին, 1800 թվում ընկնում էր քաղաքական արդիւնքից (доходъ) բոլորը 18 ֆրանկ 99 սանտիմ, իսկ 1872 — թվում — 107 ֆրանկ, Բայց դորա փոխարէն և քաղաքական ծախսերից իւրաքանչիւր բնակիչի բաժին 1846 թ. ոչ աւելի քան 43 ֆրանկ 99 սանտիմ, իսկ 1872 ին արդէն 104 ֆրանկ 32 սանտիմ:

Աւելորդ չէ նկատել այս բանում, որ քաղաքի պարտքի վճարը կլանում է համարեա թէ կէսը բոլոր քաղաքական արդիւնքների և թէ առօրեայ ամեն հարկաւորութիւնները մայրաքաղաքի բնակիչների կարող են բաւականութիւն ստանալ միայն արդիւնքների մնացած կիսից: Արդէս զի հնար լինի մերձաւորապէս ծանօթանալ այդ հարկաւորութեանց հետ՝ պէտք է մի փոքր աւելի մանրամասնօրէն վերահասու լինել Փարիզի արդեանց, և ծախուց:

Փարիզի եկամուտները, գլխաւոր կերպով կիտվում էին հարկի վերայ աւելացած այն սանտիմներից, որոնք, ինչպէս մենք արդէն ասացինք վերեւումը, իւրաքանչիւր գեպարտամենտը իրաւունք ունի աւելացնել ուղիղ հարկերի վերայ և դորանից գոյացած գումարը գործադրել գեպարտամենտական վարչութեան և բարեկարգութեան կարեւորութեանց վերայ:

Այդ աւելցրած սանտիմները սկզբում բաղկանում էին աւելացրած հնգական սանտիմ վարձից, որոնք զրվում էին անշարժ և շարժական կալուածների հարկի վերայ, երեք սանտիմ՝ չորս գլխաւոր տեսակ ուղիղ հարկերի վերայ և ութ սանտիմ պատենտական (վկայագիր) հարկերի վերայ: Այդ աւելացրած սանտիմները 1869 թ. տուին Փարիզին 5,233,132 ֆր. իսկ 1874 թ. հարկերը երեք պատիկ աւելանալուն համար — Փարէզ քաղաքը ստացաւ արդէն 15,663,933:

Դորա վերայ աւելցաւ 1874 թ. շների հարկը (такса) (520,000 ֆր.) և փողոցները աւելելու և սրբելու համար վճարը (2,760,000 ֆր.), որոնք նոյնպէս պէտք էր ուղիղ հարկերին վերագրել, որոնք պարտաւորական են Փարիզեացի համար:



Ընդհանուր բարդութեան մէջ, շնորհիւ բոլոր այդ յաւելուածներէ, ուղիղ հարկի գումարը, Փարիզեցիներէջ վճարուած 1874 թուականից բարձրացան արդէն մինչև 99,303,841 Ֆր. որոնցից 63,708,288 — կազմուէին թագաւորութեան սեպհականութիւն, 18,054,095 — հանվում էին Սենեան դեպարտամենտի պէտքերի համար և 17,541,458 Ֆրանկ գնումէին քաղաքի օգտին: Այս թիւը 1874 թ. դարձեալ յաջող հանգամանքներում աճել սկսաւ և այժմ հաւասարվումէ համարեա թէ 24,000,00 Ֆրանկի:

Բայց այս թիւը բոլորովին չնչին է համեմատութեամբ Փարիզի ուրիշ շատ աւելի նշանաւոր քաղաքական եկամուտների բաժինների հետ, որոնք ստացվում են զխաւորապէս չորս աղբիւրներից՝ մաքսային հարկերից, շուկայական առևտրից և շուկաների բնակարաններից, անասունների մորթելու սպանդանոցից և ապրանք կիտելու տեղերի կամ փոքր քաղաքների հարկից:

Որովհետև Փարէզը 1798 թվին կազմումէ առանձին, մնացեալ Ֆրանսիայից ջոկ մաքսային շրջան, այս պատճառով բոլոր նորա մէջ մտցրած գործ ածելու առարկաները և կերակուրի պաշարեղէնները — ենթարկվում են յայտնի մաքսային հարկի վճարման, զորօրինակ խմիչքները, խոտը, փայտը, պտուղները, որսած վայրենի կենդանիները կամ թռչուններ, քար, երկաթ, աղիւս, ապակի կամ աւազ . . . Բոլորը քաղաքը ներս բերելու համար մաքսի տակ է ձգած և սահմանադրած բաւական թանգ վճարի (տարիֆ): Որ աստիճանի այդ մաքսը մեծ է և մինչև որ աստիճանի նորան սահմանող տարիֆը կարող է փոփոխուել, դժուար չէ տեսնել նորանից, որ մաքսային հարկերը, որոնք բերում են Փարիզին 1860 թ. 74,385,147 Ֆր. — 1874 թ. արդէն տուեցին 109,135,000 Ֆր. ուրիշ նշաւոր արդիւնք Փարէզ քաղաքի համար համարվումէ շուկաների ամբողջ քանակութեամբ առևտրից և շուկայական բնակարանների վարձի հարկը: Ըստ որում Փարիզի մէջ 1872 թուից համարում են 45 շուկա և առևտրական հրապարակներ, ուստի չէ կարելի դարմանալ որ շուկայական հարկը կազմումէ երևացող նպաստ քաղաքական եկամուտների համար: Ըուկաներից 28ը կառավարվում են քաղաքի ձեռքով, իսկ 17 կապալով են տրվում զանազան բնկերութեանց: Տեղերի գները նշանակվում են առանձին, քաղաքից հանտատուած տարիֆով, ուստի ոչ թէ հիմն է բնգունվում միայն քառակուսի մետրը մակերեւոյթի առևտուրի համար բանած, այլ և այն ժամանակը, որի մէջ այդ քառակուսի մետրը մտադրվումէ գրաւելու: Ըուկայական հարկը 1860 թ. բերումէր Փարիզին ոչ աւելի քան 6,859,610 Ֆր. իսկ 1874 թ. — տուեց 14,021,100 Ֆր. Փարէզ քաղաքի արգեանց մէջ ըստ նշանակութեան երրորդ տեղը բռնումէ սպանդանոցներում անասունների մորթելու հարկը: Առաջին Փարիզի մէջ կային 8 մեծ սպանդանոցներ մեծամեծ անասունների և խոզերի համար. 155 մասնաւոր գործարաններ



անասուններ մորթելու, և 91 ապուխտարան, միտք ապխտելու համար, ֆաղաքի առողջական զրուծիւնը բարւոքելու մարով՝ Փարիզի վարչութիւնը որոշեց բոլոր այդ գործարանները 1880 թուին փակել, և շինեց Արկսի և Սան-Մարտէնի ջրանցքի խառնուրդում հսկայական սպանդանոցներ, որոնք Փարիզի բնակչաց  $\frac{1}{3}$ -ին միս են մատակարարում ներկայումս:

Այդ սպանդանոցներում առնուամեն զանազան տեսակ մաքսեր թէ նոյն իսկ տավարները մորթելու համար, և թէ միտք և փորոտիքը լուսանալու և պատրաստելու համար, և ճարպը հալելու և լն:

Ոչ յառաջ քան 1841 թ. քաղաքը ստանում էր բոլոր այդ հարկերից միայն 1,438,000 ֆր. իսկ 1874 թ.—արդէն մինչև 2,500,000 ֆր.:

Չորրորդ բիւզժետի արդիւնքը է քաղաքական ապրանքներ դասաւորելու տեղերի կամ փոքր քաղաքների հարկը, որոնցից Փարիզում կան քանի մի տեղ զանազան զիտաւորութեամբ. զօրօրինակ, հեղուկների ընդունարան, մաքսային վաճառքների տեղ, աղի շտեմարան, գինու քաղաքիկ և սորանց նմանները, Լարկերը այդ տեղերի վարձելուն 1874 թուին հասնում էին մինչև 1,397,566 ֆր.:

Ծանօթանալով Փարիզի քաղաքական եկամուտների նշանաւոր աղբիւրների հետ, մենք մտիկ տանք այժմ նորա ծախսերի վերայ, և այն ժամանակ, ի հարկէ չենք զարմանայ, որ իւր ահագին եկամուտներով, այս համաշխարհական քաղաքը այնպէս շատ անգամ ստիպուած է լինում գիմել ժամանակաւոր փոխառութիւնների, որոնք կուլ են տալիս տոկոսները վճարելով համարեա թէ քաղաքական բիւզժետի կէտը:

Փարէզ քաղաքի ծախուց ցուցակի մէջ, իւրաքանչիւր քայլափոխում, մենք տեսնում ենք միլիոններ և տասնական միլիոններ, որոնք գործ են անվում հասարակական պիտոյքների համար: Այս հասարակական պիտոյքները ամէն կողմից առաջին տեղն են բռնում:

Պէտք չէ մոռանալ, որ այս տասնական միլիոնները գործ են անվում և ամէն մէկ գրօշը հաշուի մէջ է, իւրաքանչիւր պոլուշկան խիստ անողորմելի կանտրօլի է ստորադրվում, և նորա վառնելը ոչ միայն չարամտութեամբ, այլ մինչև անգամ անհիմնաւորութեամբ, սարսափելի պատասխանատուութեան ներքոյ է ձգում:

Նորա հետ Փարէզ քաղաքի ծախսերի մէջ երևում է նոյն իսկ ճակատագրական օրէնքը, որ այս դարու սկզբից ծանրանում է Փարիզի և նորա բնակիչների գլխին: Այս ճակատագրական օրէնքը նոյն անկանոն, անհաւասար — աճելութեան օրէնքն է, որ կազմում է և Փարէզ քաղաքի գլխաւոր ոյժը: Այս աճելութիւնը Փարէզ քաղաքի ծախսերի մէջ զարձեալ երևում է տասնական միլիոններով, որոնք իւրաքանչիւր 7—8 տարեընթացքում անդադար և անխափան աճում են նորանոր տասնական միլիոններով, վերակոչուած ծանր ճնշողութեամբ ամենակարեւոր պէտքերի: Ամեն սարսափելի աճելութիւնը Փարիզի ծախսերի մէջ, ինչ-



պէս մենք վերևումը նկատեցինք արդէն, երևումէ ծախսերի աճելու-  
թեան մէջ, որոնք պէտք է ծածկեն քաղաքական փոխառութիւնը  
(кредитъ)։ Ոչ յառաջ քան 1860 թ. Այս ծախսերը ըստ փոխառու-  
թեան չէին բարձրանում 8,068,964 Ֆր. իննը տարուց յետոյ նորա  
աճեցին արդէն մինչև 47,250,291 Ֆր. այսինքն համարեա թէ վեց ան-  
գամ. իսկ 1874 թ. հասան հսկայական թուանշանի 91,653,919 Ֆր.  
այսինքն տասնուչորս տարեընթացքում աւելացան համարեա թէ 12  
անգամ։

(Թ-րէ՛.) Զ. Տէր Զաքարեանց։

### Ո Ւ Ղ Ե Ր Ձ

Առ Օգոստոսիառ և Ինքնակալ Մեծ ԿԱՅՍՐՆ ամենայն Ռուսաց  
ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ. ի Թագադրութեան Նորին Կայսերական Մեծու-  
թեան ի 15 Մայիսի 1883, ի Մոսկվա.

Գրեցաւ ի 6 ն Մայիսի նոյն (1885) ամի յԱխալցխայ։

Այն ինչ՝ Արփին Ռուսաստանեայց և Լուսին,  
Անմահ վկայք հայրենավրէժ Արքային\*) .  
Որ քաջութեամբ ելեալ յերկրէս ի յերկին,  
Բարձ մեծ և փառք՝ Քեղ շնորհաց յոյժ վերին,  
Ի ի հանդիսի Աշխարհակալ Պետութեան,  
Յորում ուղիղք միշտ անվկանդ, անսասան .  
Ի վէճ ամուր՝ յաղթող Չեռին, կան, մնան,  
Եւ վայելեն բարեբաստիկ քաղցր զկեան .  
Թէ՛ խանդացաւ նմա տգէտ թշնամին,  
Թէ՛ գուր փորեաց Ամենողորմ Արքային,  
Եւ զոսկեթել կենացն խղեաց կապ՝ Նորին .  
Ոչինչ է նա (թշնամին), ոչնչութեան ի վճին՝  
Էջ խորասոյզ՝ ընդ իւրայնովքն բնաւին .  
Եւ ի վերջին կենաց Նորին (Արքային) յերեկուն,  
Ի բարձրագէտ քանդակեցաւ ճակատնն .  
• Ազատարար ուղղափառաց, աննկուն,  
Անկեալ ազգաց, Սլաւոնեան, փրկութիւն .  
Եւ նահատակ Կայսր Ինքնակալ Ռուսիոյ,  
Զյաղթական առեալ Պսակ Իւր Գլխոյ . . .  
Իսկ Գու՝ Արծուից Ռուսաստանեայց,  
Նորափետուր, նոր Արծուի .

(\*) Այն է՝ Ազատարար Աղէքսանդր Բ. նահատակ Արքայն Ռուսաց։